ՀՀ ԳՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՑԻՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆԸ

ՀԱԿԱՄԱՆՐԷԱՅԻՆ ԴԵՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Հակամանրէային դեղերի /նյութերի/ նկատմամբ մանրէների կայունությունը արդի և գլոբալ խնդիր է ոչ միայն բժշկության, այլև անասնաբուժության և սննդամթերքի անվտանգության ոլորտներում:

Հակաբիոտիկների կիրառման նկատմամբ արդյունավետ հսկողությունը պահանջում է բազմաթիվ խնդիրների լուծում:

Հակամանրէային պատրաստուկների շրջանառության նկատմամաբ խիստ հսկողությունը և վերահսկողության իրականացումը ապահովում է հակամանրէային նյութերի՝ հակաբիոտիկների ոչ ռացիոնալ օգտագործման հաճախության նվազում և սահմանափակում հակաբիոտիկների նկատմամբ կայուն /ռեզիստենտ/ մանրէների և նրանց տարատեսակների առաջացումը և տարածումը.

Վարակների աղբյուրների մեկուսացումը և վերացումը կարևորագույն միջոցառումներից է /հիվանդ կենդանիներ, կոնտամինացված սարքեր և գործիքներ, ոչ հիգիենիկ և ստերիլ պայմաններում աշխատող անասնաբուժական ծառայություն, ոչ բավարար աշխատանքնային, տեխնիկական, լաբորատոր և մասնագիտական կարողություններ/, որը պայմանավորում է հակամանրէային կայունության առաջացումը և տարածքումը:

Շատ կարևոր է անասնաբուժությունում հակաբիոտիկների կիրառման կուլտուրայի ներդրումը և ավանդական բուժման մեթոդներից և դեղերից անցումը ժամանակակից մոտեցումներին և առաջարկվող նոր դեղերին:

Հատկապես մեծ նշանակություն ունի հակամանրէային ռեզիստենտության խնդրի լուծման համար մոնիթորինգային նպատակաուղղված հսկողությունը և գործնականում օգտագործվող դեղերի մասին տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը:

Վարակների մանրէաբանական ախտորոշումը և հարուցչի անջատումն ու նրա զգայունության որոշումը հակամանրէային դեղերի նկատմամբ, հանդիսանում է առանցքային միջոցը վերը նշված հսկողության իրականացման համար և ապահովում է ադեկվատ և ճիշտ ընտրված արդյունավետ հակամանրէային բուժումը:

Պետք է փաստել, որ չնայած կենսատեխնոլոգիայի, գենետիկայի և այլ գիտությունների աննախադեպ զարգացմանը, դեռևս չի հաջողվել ստանալ այնպիսի հակամանրէային պատրաստուկ, որը կազդի բոլոր ախտածին մանրէների վրա:

Պետք է փաստել, որ հակամանրէային պատրաստուկների նկատմամբ ռեզիստենտությունը զարգանում է ոչ միայն դրանց սխալ կամ ոչ ռացիոնալ օգտագործման, այլև դրանց ճիշտ և տեղին օգտագործման պայմաններում՝ մանրէների մեծ հարմարվողականության արդյունքում:

Հակամանրէային կայունությամբ օժտված մանրէների հարուցած հիվանդությունների դեպքերի մեծամասնությունը ունի ծանր ընթացք և առավել հաճախ են մահացության դեպքերը, քան հակամանրէային կայունություն չունեցող մանրէների առաջացրած հիվանդությունների դեպքում:

Պետք է փաստել նաև, որ կենդանիների և մարդկանց մոտ հակամանրէային միջոցների նկատմամբ կայունության հիմնական պատճառներից է հիվանդությունների թերի ախտորոշումը՝ առանց մանրէակենսաբանական հետազոտությունների, հարուցչի նույնականացման, և պրակտիկ բժիշկների, անասնաբույժների և մանրէակենսաբանների երկկողմ համագործակցության բացակայությունը:

Հակամանրէային պատրաստուկների նկատմամբ մանրէների կայունությունը պահանջում է ռազմավարություն դրա կանխարգելման և կասեցման համար, դրա հիմնական ուղղություններից են՝

ա/ հակաբիոտիկների օգտագործման սահմանափակումը

բ/ ուղղորդված հսկողության ապահովումը և իրականացումը

գ/ ինֆեկցիաների դեպքում նրանց մեկուսացման ճիշտ սկզբունքները

դ/ հակաբիոտիկներն օգտագործող անասնաբուժական ծառայության և շահառու հատվածների կրթում և կրթական մակարդակի բարելավում դասընթացների, ուսուցումների և տարբեր եղանակներով իրազեկումների միջոցով:

Ինչ է պետք անել խնդրի լուծման կամ նվազեցման համար

Պրակտիկ անասնաբուժությունը ևս փաստում է, որ հակաբիոտիկները որոշ ժամանակ օգտագործելուց հետո կամ չեն ունենում նախկին ազդեցությունը կամ առհասարակ չեն տալիս արդյունք: Հաճախ դա պայմանավորված է չմտածված օգտագործմամբ, իսկ կարևոր նշանակություն ունի նաև ներկայում գործող դեղերի գովազդը և ցածր մակարդակի առաջընթացը անասնաբուժական գիտելիքների մատուցման կամ ձեռքբերման հարցերում:

Անասնաբուժությունում նման սխալ և չգիտակցված մոտեցմամաբ հակաբիոտիկների կիրառումը հանգեցնում է հանրային առողջության ռիսկերի և հետևյալ խնդիրներին՝

ա/ կենդանական ծագման մթերքի որակի և անվտանգության խնդիրներ.

բ/ կենդանիներից ստացված կենդանական ծագման մթերքում դրանց թույլատրելի սահմանաչափերի գերազանցում կամ չթույլատրված նյութերի առկայություն, որը անցնում է սննդի միջոցով մարդուն.

գ/ մարդկանց և կենդանիների համար ընդհանուր ինֆեկցիոն հիվանդությունների դեմ մարդաբուժությունում օգտագործված դեղերի ցածր արդյունավետություն կամ անարդյունք կիրառում.

դ/ կենդանիների և մարդկանց մոտ սննդի միջոցով փոխանցվող տարբեր ախտաբանական պրոցեսների զարգացում դեղերի ազդեցության հետևանքով, որոնցից լայն տարածում ունեն իմուն

համակարգի հիվանդությունների աճը, դիսբակտերիոզը, ալերգիաները և այլն:

Մանրէների կայունությունը հակամանրէային պատրաստուկների՝ հակաբիոտիկների նկատմամբ լինում է բնական և ձեռքբերովի.

Բնական կայունությունը բնորոշվում է մանրէի մոտ հակաբիոտիկի թիրախի բացակայությամբ կամ մանրէի մոտ այդ թիրախի ոչ մատչելիությամբ, որը հակաբիոտիկի նկատմամբ տվյալ մանրէական տեսակի ցածր թափանցելիության կամ ֆերմենտատիվ ակտիվազրկման հետևանք է:

Ձեռքբերովի կայունությունը դա մանրէների առանձին շտամների՝ տարատեսակների կենսունակության պահպանման ունակությունն է կամ հատկությունը հակաբիոտիկների այնպիսի քանակությունների և կոնցենտրացիաների նկատմամաբ, որոնք ճնշում կամ կասեցնում են մանրէական պոպուլյացիայի մեծ մասին: Բոլոր դեպքերում ռեզիստենտության ձևավորումը պայմանավորված է գենետիկ սկզբունքով՝ նոր գենետիկ ինֆորմացիայի ձեռքբերում կամ սեփական գենային փոփոխությամբ:

Հայտնի են հակամանրէային ռեզիստենտության հետևյալ բիոքիմիական մեխանիզմները.

ա/ մանրէներում թիրախի վրա ազեցության փոփոխությունը.

բ/ հակաբիոտիկի ակտիվազրկումը.

գ/ մանրէական բջջից հակաբիոտիկի ակտիվ արտազատումը.

դ/ մանրէական բջջի արտաքին կառուցվածքների թափանցելիության խախտումը.

ե/ մետոբոլիկ շունտի ձևավորումը.

Հակամանրէային կայունության՝ ռեզիստենտության առաջացման պատճառներն են՝

ա/ հակամանրէային միջոցների չհիմնավորված նշանակումը.

բ/ վիրուսային վարակների դեպքում հակամանրէային միջոցների կիրառումը.

գ/ հակամանրէային միջոցի սխալ ընտրությունը.

դ/ հակամանրէային միջոցի սխալ դոզավորումը և կիրառումը՝ ոչ ճիշտ բաժնեչափերի և ներմուծման ինտերվալների սխալ ընտրությունը, բուժման չհիմնավորված երկար տևողությունը.

ե/ սոցիալական վիճակը և դրանով պայմանավորված շուկայում անորակ և էժան դեղերի հայտնվելը և կիրառումը.

զ/ սոցիալական վիճակը և դրանով պայմանավորված տարբեր դեղամիջոցների և նյութերի կիրառմամբ ստացված սննդամթերքի իրացումը շուկայում:

Հակամանրէային կայունության կանխման խոստումնալից և արդարացված մոտեցումներից է՝

ա/ հակաբիոտիկների կոմբինացված կիրառումը.

բ/ նպատակային և խիստ ուղղորդված հակամանրէային բուժումը.

գ/ հակամանրէային նյութերի հայտնի խմբերին պատկանող նոր միացությունների սինթեզը.

դ/ հակամանրէային պատրաստուկների նոր խմբերի հայտնաբերումը.

ե/ մթերատու կենդանիների բուժման ժամանակակից մոտեցումների ներդրումը, կենդանական ծագման մթերքում հակամանրէային պատրաստուկների թույլատրելի չափաքանակների գերազանցման կամ չթույլատրված նյութերի առկայության բացառումը:

Հակամանրէային դեղերի նկատմամբ մանրէների կայունության զարգացման կանխարգելման նպատակով պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով՝

ա/ բուժումը հակամանրէային պատրաստուկներով կատարել առավելագույն դոզաներով մինչև հիվանդության լուծումը /հատկապես ծանր դեպքերում/, նախընտրելով օրգանիզմ դեղի պարէնտերալ ներմուծումը.

բ/ պարբերաբար լայն կիրառվող պատրաստուկները փոխարինել նոր ստեղծված կամ հազվադեպ նշանակվող պատրաստուկներով.

գ/ բուժման համար կիրառել մի շարք հակամանրէային պատրաստուկների համակցումը.

դ/ պատրաստուկները, որոնց նկատմամբ մանրէների մոտ առաջանում է կայունություն ստրեպտոմիցինի նկատմամաբ, չպետք է կիրառել բուժման համար որպես միակ միջոց՝ մոնոթերապիա.

ե/ փոխարինել հակամանրէային պատրաստուկը այնպիսի նյութով, որի նկատմամբ կա խաչաձև կայունություն.

զ/ այն հակաբիոտիկները, որոնք նշանակվում են կանխարգելիչ կամ արտաքին՝ հատկապես աէրոզոլ, դրանց նկատմամաբ կայունությունը ձևավորվում է ավելի արագ և կարճ ժամկետում, քան դրանց պարէնտերալ և ներքին օգտագործման դեպքում.

է/ կատարել առավել հաճախ օգտագործվող պատրաստուկի տեսակի գնահատում և դրանով բուժման արդյունքների վերլուծություն.

ը/ պարբերաբար գնահատել շրջանառվող հարուցիչները և դրանց տարատեսակները՝ շտամները.

թ/ սահմանափակել այն հակամանրէային պատրաստուկների օգտագործումը անասնաբուժությունում և մթերատու կենդանիների մոտ, որոնք օգտագործվում են նաև բժշկության մեջ.

ժ/ բուժման համար նախընտրել ազդեցության նեղ շրջանակով՝ սպեկտրով,հակամանէային պատրաստուկները.

ի/ մշակել իրազեկման և կրթման ծրագրեր, կազմակերպել շահառու խմբերի ուսուցում՝ նվազագույն կամ պահանջվող գիտելիքների մակարդակ ապահովելու նպատակով.

լ/ սննդամթերքի շրջանառության փուլերում հատուկ կարևորել սննդի արտադրության և իրացման կազմակերպությունների կողմից սննդամթերքի անվտանգությունը կարևորելը ոչ միայն սննդամթերքի անվտանգության հաճախ տարածված և կիրառելի չափորոշիչներին /ծանր մետաղներ, մանրէներ, սնկեր, թույներ/ այլև հակամանրէային նյութերի պարունակության՝ թույլատրելի սահմանաչափերին, դրանց գերազանցումներին կամ արգելված նյութերի վերաբերյալ տեղեկատվության պահանջին և լաբորատոր հետազոտություններով դրանց հավաստմանը և փաստաթղթավորմանը վերաբերող հարցերին:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ

Իրազեկման շաբաթ

2015 թ. նոյեմբերի 16-22

World Health Organization

www.ssfs.am
Հասցե՝ ՀՀ ք. Երևան 0051, Կոմիտաս 49/2
Հեռ.՝ +37410206040 շուրջօրյա Ֆաքս՝ +37410204590